ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2009 թվականի N___ -Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԼՈՌԻ-ԲԵՐԴԻ ԽԱՉՔԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

Թույլատրել «Հայաստանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2008 թվականի փետրվարի 16-ին N 02514442 մաքսային հայտարարագրով Նյու Յորք քաղաքի Մետրոպոլիտենի արվեստի թանգարան արտահանած Լոռի-Բերդի խաչքարի (XII դար, բազալտ, չափսերը՝ 108*100*20, գույքահամարը՝ ՀՊԹ Ժ-54, ապահովագրական արժեքը՝ 3000000 եվրո) նկատմամբ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմի երկարաձգումը մինչև 2014 թվականի փետրվարի 15-ը։

Հիմնավորում

«Հայաստանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից արտահանված Լոռի-Բերդի խաչքարի նկատմամբ կիրառված «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունման նպատակահարմարության մասին

«Հայաստանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից արտահանված Լոռի-Բերդի խաչքարի նկատմամբ կիրառված «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է հայկական ինքնատիպ մշակութային ժառանգությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքի համաշխարհային ճանաչում ունեցող Մետրոպոլիտենի արվեստի թանգարանում ժամանակավոր ցուցադրության միջոցով միջազգային հանրությանը մեկ տարուց ավելի ժամկետով ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Մոտ տասն ամիս է խաչքարը ցուցադրվում է Մետրոպոլիտենի արվեստի թանգարանում և, ըստ «Նյու Յորք Թայմզում», ինչպես նաև այլ պարբերականներում տպագրված հոդվածների, արդեն դառնում է նշանակալից երևույթ Նյու Յորքում:

Աշխարհի բոլոր կողմերից բազմահազար այցելուներ հնարավորություն են ունենում ծանոթանալու ոչ միայն թանգարանի հավաքածուներին, այլև դիտելու հայ մշակութային ժառանգության այնպիսի մի հուշարձան, որը կարող է էական դեր ունենալ հայ մշակույթի հանրահռչակման գործում, ապահովելով հայ մշակույթի անընդմեջ առկայությունը համաշխարհային գանձարանում: